ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

հայտնի է նաև որպես

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Ինչու՞ է մեզ պետք Ստամբուլի կոնվենցիան

www.coe.int/conventionviolence

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Ինչու՞ է մեզ պետք Ստամբուլի կոնվենցիան

Ինչ փոփոխություններ այն կարող է բերել և ինչ միջոցներ են ձեռնարկվել այն համապատասխանելու համար

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա) երաշխավորում է, որ կանայք պաշտպանված լինեն բռնության բոլոր ձևերից և կարողանան ստանալ անհապաղ և արդյունավետ աջակցություն: Բրոշյուրի նպատակն է օգնել ՔՀԿ-ներին իրենց հաղորդակցման/իրազեկման միջոցառումները պլանավորելիս, ընդ որում այն պետք է տեղայնացվի և խմբագրվի՝ ներառելով ազգային օրինակներ և անհրաժեշտ տեղեկատվություն: Որոշում կայացնողների հետ շփումներում կոնվենցիայի կարևորությունը ընդգծելու համար կարող են օգտագործվել հետևյալ օրինակները.

Ստորև նշված են բռնության ենթարկված կանանց պաշտպանելու համար կոնվենցիայով նախատեսված փոփոխություններից մի քանիսը.

- Կնոջ վարքը կամ հագուստը չի նշանակում, որ նա համաձայն է սեռական հարաբերությունների: Եթե նա «այո» չի ասել, ապա կատարվածը բռնաբարություն է և պատասխանատվությունը կրում է միայն բռնարարը:
- Կինը կարող է զանգահարել բռնության դեպքերի ազգային օգնության թեժ գիծ, որտեղ վերապատրաստված մասնագետը նրան անմիջապես տեղեկատվություն կտրամադրի անհրաժեշտ քայլերի վերաբերյալ:
- Ոստիկանությունում լսում են կնոջը և, եթե բռնարար զուգընկերոջ պատճառով նա ստիպված է լքել իր տունը, պաշտպանություն և աջակցություն տրամադրում:
- Բռնության ենթարկված կինը կարող է օգտվել հատուկ աջակցության ծառայություններից, ինչը կօգնի նրան նոր կյանք սկսել: Նրան չեն կարող ստիպել վերադառնալ բռնարար զուգընկերոջ/ամուսնու մոտ:

- Բռնության ենթարկված կինը չի կարող ցուցմունք տալ՝ գտնվելով նույն սենյակում բռնություն գործադրած անձի հետ կամ հարկադրաբար հաշտվել նրա հետ:
- Սեռական բռնության ենթարկված կինը կարող է դիմել ճգնաժամային կենտրոն, որտեղ նա անհապաղ կստանա մասնագիտական օգնություն:
- Բռնության ենթարկված կինը կարող է գնալ կանանց համար նախատեսված կացարան և աջակցություն ստանալ բռնության ենթարկված զուգընկերոջից/ամուսնուց հեռանալու հարցում:
- Կինը կարող է երկարաժամկետ հոգեբանական աջակցություն ստանալ, որպեսզի կարողանա հաղթահարել բռնության արդյունքում առաջացած հոգեկան տրավման:
- Կինը, որը վարժ չի տիրապետում երկրի պետական լեզվին, կարող է ստանալ իրեն անհրաժեշտ աջակցությունը՝ իր մայրենի լեզվով, առանց կացության թույլտվությունը կորցնելու վախի:
- Անմիջական վտանգի մեջ հայտնվելու և ապահով կացարան չունենալու դեպքում կնոջ համար կարող է պաշտպանական որոշում կայացվել:
- Կինն ունի իրավաբանական օգնության իրավունք, ընդ որում, անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չունենալու դեպքում, նրան տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն:
- Բռնության ենթարկվելու կամ բռնության ականատես լինելու դեպքում տուժող կնոջ երեխաները պաշտպանվում են, իսկ բռնի զուգընկերոջ կապը երեխայի հետ սահմանափակվում:
- Բոլոր մասնագետները (դատավորները, դատախազները, ոստիկանները) կնոջը վերաբերվում են հարգանքով և նրա հետ շփվում այնպես, որ նա չենթարկվի կրկնակի զոհականացման:

Ստամբուլի կոնվենցիան վավերացրած պետությունները կոնվենցիային համահունչ տարբեր քայլեր են ձեռնարկում.

- Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի գործողությունների ծրագրերում նրանք ներառում են վերպատրաստման դասընթացներ մասնագետների համար (ոստիկանության, դատավորների, դատախազների, սոցիալական և առողջապահական աշխատողների, մանկավարժների և այլն):
- Իրենց երկրներում կազմակերպում են կանանց համար կացարաններ և դրանց գործունեության համար հատկացնում են բավարար ֆինանսական միջոցներ:

- Սեռական բռնության ենթարկված անձանց համար հիմնում են ճգնաժամային կենտրոններ, որտեղ աշխատում են վերապատրաստված մասնագետներ:
- Արգելում են բռնարարի և տուժողի պարտադիր առերեսումը քրեական կամ քաղաքացիական իրավունքի գործերի քննության կամ դատավարության փուլում, օրինակ՝ ամուսնալուծության գործընթացում:
- Գործում են մասնագիտացված քննիչներ՝ ապահովելու կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին հաղորդումների արագ քննումը՝ հարգելով տուժողների իրավունքներն ու կարիքները:
- Ապահովում են ոստիկանության և օժանդակ ծառայությունների կողմից կանանց արագ պաշտպանությունը, որպեսզի կինը թակարդված չմնա իրավախախտի հետ նույն տանը:

1. Ինչպե՞ս պետք է բարելավվի համակարգը Ստամբուլի կոնվենցիայի վավերացումից հետո:

Տուժողը հնարավորություն կունենա ստանալ արդյունավետ և համապարփակ աջակցություն (հոգեբանական, իրավական, բժշկական):

Իրավապահ մարմինների պաշտոնյաները և մասնագիտացված ծառայությունները կանանց նկատմամբ բռնության դեպքերի հետ կապված պետք է հստակ ընթացակարգեր սահմանեն և զոհակենտրոն մոտեցում ցուցաբերեն: Ուղղակի աջակցություն ստանալու համար տուժողը պետք է կարողանա օգտվել համապատասխան ծառայություններից, այդ թվում՝ կացարաններից, հիվանդանոցներից, մասնագիտացված տեղեկատվական կենտրոններից և սոցիալական աջակցության ծառայություններից, որոնք պետք է անհրաժեշտության դեպքում համակարգված ձևով համագործակցեն միմյանց հետ: Արդյունավետ միջգերատեսչական համագործակցությունը կենսական նշանակություն ունի: Բռնության ենթարկված անձանց հետ աշխատելու համար պահանջվում է մասնագիտացված ծառայությունների և իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստում:

Ինչպիսի՞ն է ներկայիս իրավիճակը Հայաստանում:

Ներկայումս քանի՞ տարբեր հաստատությունների հետ պետք է կապ հաստատի տուժողը՝ օգնություն ստանալու համար: Որքա՞ն հեռու են դրանք գտնվում միմյանցից: Արդյո՞ք տարբեր ծառայությունները (օրինակ՝ իրավապահ մարմինները և մասնագիտացված ծառայությունները) լավ են փոխգործակցում: Կա՞ն արդյոք պատրաստված մասնագետներ, որոնք գիտեն և հասկանում են տուժողների հետ աշխատանքի սկզբունքները:

Այժմ Հայաստանում ընտանեկան բռնության ենթարկված անձինք կարող են օգնություն խնդրել ընտանեկան բռնության աջակցման 11 կենտրոնից, որոնք պետականորեն գրանցված են և տեղակայված են երկրի ողջ տարածքում, մեկը՝ մայրաքաղաքում, մյուսները՝ 10 մարզում: Այս կենտրոնների աշխատակազմը վերապատրաստված է միջազգային լավագույն փորձի համապատասխան և անում է լավագույնը՝ վերապրածների հետ այդ չափանիշներին համապատասխան աշխատանքի համար: Նրանց գործունեությունը վերահսկվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Ընտանեկան բռնության աջակցման կենտրոնները տեղակայված են մեկը մյուսից 1-2 ժամ հեռավորության վրա, այնպես որ անգամ ամենահեռավոր և գյուղական շրջաններից բռնության ենթարկվածները հասանելիություն ունենան ծառայություններին: Սեռական բռնության ենթարկվածները կարող են նաև ստանալ մասնագիտացված ծառայություններ սեռական բռնության մասնագիտացված կենտրոնից, չնայած մարզերում ավելի քիչ ծառայություններ են հասանելի և հիմնականում կենտրոնացված են մայրաքաղաքում:

Ընտանեկան բռնության ենթարկվածները կարող են դիմել նաև ոստիկանություն: Հստակ սահմանված արձանագրությունները ոստիկանությանը պարտավորեցնում են ընտանեկան բռնության դեպքերն ուղղորդել գրանցված ընտանեկան բռնության աջակցման կենտրոններ: Ոստիկանությունը կարող է նախազգուշացումներ կամ անհետաձգելի միջամտության որոշումներ տալ:

Նախազգուշացումները կիրառվում են, երբ ոստիկանությունն առաջին անգամ է հայտնաբերում ընտանիքում բռնության դեպքը, և որտեղ չկան իրավախախտման հիմնավոր ապացույցներ և, հետևաբար, անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու հիմքեր: Անհետաձգելի միջամտության որոշումները տրվում են, երբ առկա են կրկնակի կամ շարունակական բռնության անմիջական ռիսկի ողջամիտ ապացույցներ: Անհետաձգելի միջամտության մասին որոշում կարող է կայացվել նաև, եթե նախազգուշացում ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում կատարվել է բռնի գործողություն՝ առանց քրեական հանցագործության տարրերի:

Ոստիկանությունը անհետաձգելի միջամտության որոշմամաբ կարող է բռնարարին բռնության ենթարկվածի բնակության վայրից անհապաղ հեռացնել և արգելել բռնարարի վերադարձը, կարգադրել հանցագործին մսալ տուժողից որոշակի հեռավորության վրա՝ բռնության ենթարկվածի անվտանգությունն ապահովելու նպատակով և արգելել բռնարարին կապ հաստատել տուժողի հետ՝ չայցելել նրա բնակավայր, աշխատավայր, դպրոց և ժամանցի վայրեր: Հարկ է նշել, որ ընտանեկան բռնության մի քանի ձևեր, որոնք օրենքով նախատեսված չեն, չեն նախատեսում պաշտպանական միջոցներ՝ զրկելով տուժողներին պաշտպանությունից:
Պաշտպանական որոշումներ կարող են կայացնել նաև դատարանը, երբ տուժողը կամ տուժողի համաձայնությամբ աջակցության կենտրոնը պաշտպանական որոշում կայացնելու վերաբերյալ դիմում է ներկայացնում դատարան: Պաշտպանական որոշումը ներառում է նույն սահմանափակումները, ինչ անհետաձգելի միջամտության որոշումը, ինչպես նաև այլ միջոցներ: Այնուամենայնիվ, դրանք գործնականում հազվադեպ են օգտագործվում:
Կան ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումներ, որոնք զբաղվում են ընտանեկան բռնության դեմ պայքարով: Այս ստորաբաժանումների աշխատակիցներն անցել են ընտանեկան բռնության դեպքերի հետ աշխատելու հատուկ դասընթացներ, ինչպես նաև ուսումնասիրել են միջազգային փորձը:
Անհրաժեշտ է առաջնագծի բոլոր մասնագետների (սոցիալական աշխատողներ, ոստիկաններ, քննչական մարմիններ և դատական համակարգ և այլն)հետ շարունակական վերապատրաստումներ անցկացնել, ինչպես նաև ձեռնարկել հաշվետվողականության միջոցներ՝ ապահովելու իրավապահ մարմինների և դատական համակարգի բոլոր պաշտոնյաների հավատարմությունը՝ ուղղված լավագույն փորձին, կատարելագործել աջակցման կենտրոններ դեպքերի ուղղորդման և այլ ընթացակարգերը, որոնք ապահովում են բռնության ենթարկվածների անվտանգությունը:
Ընդունելով, որ վերջին տարիներին բարելավվել է համագործակցությունը ոստիկանության և ընտանեկան բռնության աջակցման կենտրոնների միջև, պետք է նշել, որ առողջապահության, կրթության, սոցիալական աջակցության այլ տեսակների համար պատասխանատու ծառայությունների հետ համագործակցության զարգացման անհրաժեշտությունը պահպանվելու համար կան մարտահրավերներ, որոնք պահանջում են կատարելագործման տևական ընթացք:

2. Տուժողը ցանկացած պահի կարող է այցելել մոտակա կացարան և անհրաժեշտության դեպքում մսալ այնտեղ իր երեխաների հետ:

Տուժողների համար կացարանների թիվը պետք է համապատասխանի հետևյալ սկզբունքին. մեկ ընտանեկան կացարան (կնոջ և նրա երեխաների համար) 10 000 բնակչի հաշվով:

Կացարանները պետք է հասանելի լինեն նաև գյուղական վայրերում ապրող բռնության ենթարկված կանանց համար: Դրանք պետք է աշխատեն շուրջօրյա և համալրված լինեն մասնագիտացված անձնակազմով: Անհրաժեշտ է ապահովել դրանց անվտանգությունը և գաղտնիությունը: Կացարանները պետք է ֆինանսավորվեն պետության կողմից:

Ինչպիսի՞ն է ներկայիս իրավիճակը Հայաստանում:

Արդյոք տուժողների համար գործող կացարանների թիվը բավարար է (հատկապես փոքր քաղաքներում և գյուղական վայրերում): Արդյո՞ք գործող կացարաններն ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվում են պետական կամ տեղական բյուջեից: Արդյո՞ք գործող կացարանները համապատասխանում են մասնագիտական սկզբունքներին՝ օգնություն տրամադրելով բացառապես բռնության ենթարկված կանանց:

Ընտանեկան բռնության ենթարկվածների և նրանց երեխաների համար Հայաստանում կա ընդամենը երկու հասանելի ապաստարան, որոնք երկուսն էլ կենտրոնացված են մայրաքաղաքում և ղեկավարվում են ընտանեկան բռնության աջակցման կենտրոններից մեկի կողմից: Երկու ապաստարաններն էլ համապատասխանում են մասնագիտական չափանիշներին՝ կենտրոնանալով բացառապես բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաների աջակցության վրա: Պետությունը միայն մասամբ է սուբսիդավորում ապաստարանները, իսկ ծախսերի մեծ մասը հոգում են անհատ դոնորներն ու հիմսադրամները:

Ապաստանի ծառայությունների աճող պահանջարկի հետ մեկտեղ, ընտանեկան բռնության կացարանները տարվա մեծ մասը ծանրաբեռնված կամ ամբողջովին լեցուն են: Երկու ապաստարանները միասին կարող են տեղավորել 24 կնոջ և նրանց երեխաներին ցանկացած պահի, ինչը չի համապատասխանում 10,000 բնակչի հաշվով մեկ ապաստարանին: Հայաստանի տարածքի դեպքում դա կնշանակի մոտավորապես 300 ապաստարան:

Ընտանեկան բռնության աջակցման կենտրոնները մարզերում կարող են հոգալ բռնությունից փախչող կանանց վարձակալության ծախսերը, երբ միջոցները առկա են, այնուամենայնիվ, ոչ մեկը չի առաջարկում մասնագիտացված ապաստարաններ, որոնք նման են մայրաքաղաքում գտնվողներին: Այսպիսով, ապաստարանների ծառայությունները մնում են անհասանելի՝ փոքր քաղաքներում և գյուղական վայրերում:

3. Տուժողն իրավունք ունի փոխհատուցում հայցել:

Անհրաժեշտ է, որ տուժողն իրավունք ունենա փոխհատուցում պահանջել ինչպես իրավախախտից, այնպես էլ պետությունից: Անձը, որը մեղադրվում է տուժողի նկատմամբ գործադրված բռնության համար, պարտավոր է փոխհատուցում վճարել կոնվենցիայով սահմանված իրավախախտումներից յուրաքանչյուրի համար: Եթե արձանագրվում է, որ պետությունը պատասխանատվություն է կրում, ապա պետությունը պարտավոր է փոխհատուցում վճարել ծանր մարմնական վնասվածք կամ առողջության համար այլ ծանր հետևանքներ կրած տուժողներին, այնքանով, որքանով այդ վնասը չի փոխհատուցվել այլ աղբյուրներից, այդ թվում՝ իրավախախտի, ապահովագրության ընկերության, հանրային առողջապահության և սոցիալական անվտանգության համակարգի կողմից:

Ինչպիսի՞ն է ներկայիս իրավիճակը Հայաստանում:

Արդյո՞ք տուժողն իրավունակ է իրավախախտից կամ պետությունից փոխհատուցում պահանջել:

Համաձայն «Ընտանեկան բռնության կանխարգելման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 2017 թվականի օրենքի (Ընտանեկան բռնության մասին օրենք) ոստիկանության կողմից որպես ընտանեկան բռնության ենթարկված ճանաչված անձը կարող է պետությունից պահանջել մինչև 150 հազար դրամ փոխհատուցում՝ մոտ 350 եվրո, կախված իր նյութական վիճակից:

Ընտանեկան բռնության ենթարկված անձը իրավախախտից փոխհատուցում պահանջելու իրավունք ունի: Այնուամենայնիվ, չկան հանցագործությունից ոչ նյութական վնասների հատուցման դրույթներ և չկան միջոցներ պետությանը պատասխանատվության ենթարկելու այն դեպքերում, երբ հանցագործը ֆինանսապես ի վիճակի չէ փոխհատուցում տրամադրել:

4. Պետք է արգելել իրավախախտի և տուժողի միջև պարտադիր առերեսումը քրեական կամ քաղաքացիական իրավունքի գործի քննության կամ դատավարության փուլում, օրինակ՝ ամուսնալուծության գործընթացում:

Կոնվենցիայում ընդգրկված բռնության բոլոր ձևերի համար պետք է արգելել վեճերի պարտադիր միջնորդավորված լուծումը, այդ թվում՝ տուժողի և իրավախախտի միջև հանդիպումը: Դա պայմանավորված է նրանով, որ տուժողը իրավախախտի ներկայությամբ կարող է կաշկանդված զգալ:

Ինչպիսին է ներկայիս իրավիճակը Հայաստանում:

Արդյոք դատարանները և իրավապահ մարմինները կազմակերպում են տուժողի և իրավախախտի առերեսում և վեճերի միջնորդված (այլընտրանքային) լուծում:

Ընտանեկան բռնության մասին օրենքի համաձայն՝ հաշտեցումը հասանելի է տուժողի և մեղադրյալի համար և պետք է իրականացվի գրանցված ընտանեկան բռնության աջակցման կենտրոնների կողմից անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումների ժամանակաշրջանում: Օրենքով հաշտեցումը հիմք է հանդիսանում անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումները չեղյալ համարելու համար: Թեև գործնականում աջակցման կենտրոնները չեն զբաղվում հաշտեցմամբ, Հայաստանում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից սովորաբար կիրառվում է հաշտեցման ոչ պաշտոնական խրախուսումը, ինչը խոչընդոտում է կանանց արդարադատության մատչելիությանը:

5. Եթե ընտանեկան բռնությունը տեղի է ունենում է երեխայի ներկայությամբ կամ կատարվում է երեխայի նկատմամբ, բռնարարի ծնողական իրավունքները կարող են սահմանափակվել:

Ստամբուլի կոնվենցիայի համաձայն՝ պետությունը կարող է միջոցներ ձեռնարկել իրավախախտների նկատմամբ, օրինակ, զրկել ծնողական իրավունքներից, եթե դա բխում է երեխայի շահերից, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ապահովել տուժողի անվտանգությունը, որը չի երաշխավորվում այլ եղանակով: Իրավախախտի նկատմամբ կարող է նաև մշտադիտարկում կամ վերահսկողություն սահմանվել:

Ինչպիսին է ներկայիս իրավիճակը Հայաստանում:

Արդյոք երեխայի ներկայությամբ ընտանեկան բռնությունը կամ երեխայի նկատմամբ բռնությունը հիմք է ծնողական իրավունքներից զրկելու կամ սահմանափակելու համար:
Հայաստանի ընտանեկան օրենսգիրքը ծնողական իրավունքներից զրկելու հիմքեր է նախատեսում, երբ ծնողը երեխայի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն է գործադրում, որը վնասում է երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը: Երեխայի ներկայությամբ ընտանեկան բռնություն գործադրելը հիմք չէ ծնողական իրավունքներից զրկելու կամ այդ իրավունքը սահմանափակելու համար: Դա սովորական դատական պրակտիկա է, երեխային հատկացնել ծնողին, որը բռնություն է գործադրել կամ տրամադրել է մյուս ծնողի դեմ:

6. Ընտանեկան բռնության ցանկացած ձևի դեպքում տրամադրվող պաշտպանությունից կշահեն նաև միգրանտ կանայք: Գենդերային հիմքով բռնության պատճառով ապաստան հայցող կանայք կկարողանան ներկայացնել իրենց բողոքը հատուկ ընթացակարգով, որը հաշվի կառնի բռնության ծանրության աստիճանը:

Միգրանտ կանայք կկարողանան հեռանալ բռնարար զուգընկերոջից կամ ամուսնուց առանց արտաքսման վտանգի: Պարտադիր է նաև, որ միգրանտները և ապաստան հայցող կանայք կարողանան օգտվել աջակցման ծառայություններից և կացարաններից՝ անկախ նրանց բնակության կարգավիճակից: Պահանջ կդրվի, որ ապաստան հայցող կանայք հնարավորություն ունենան հարցազրույցն անցկացնել զգայուն կերպով՝ ապաստան տրամադրելու հարցերով կին մասնագետի կողմից և վերապատրաստված կին թարգմանչի օգնությամբ:

Ինչպիսի՞ն է ներկայիս իրավիճակը Հայաստանում:

Արդյո՞ք ընտանեկան բռնության ենթարկված միգրանտ կանանց կամ ապաստան հայցող կանանց պաշտպանությունը ուշադրության է արժանանում: Արդյո՞ք նախատեսված է միջազգային օգնություն ծամգան երկրում գենդերային հիմքով բռնության ենթարկվելու դեպքում:

Թեև «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը հատուկ չի նախատեսում ընտանեկան բռնությունից տուժածների պաշտպանությունը, միգրանտ և ընտանեկան բռնության ենթարկված ապաստան հայցող կանայք կարող են ծառայություններ ստանալ գրանցված ընտանեկան բռնության աջակցման կենտրոններում: Նրանք, ովքեր տեղահանված էթնիկ հայեր են, նրանց համար հասանելի են պաշտպանության ավելի մեծ հնարավորություններ՝ համաձայն հայկական օրենսդրության, ներառյալ արագացված եղանակով քաղաքացիության տրամադրումը, որը թույլ է տալիս նրանց հետագայում օգտվել սոցիալական ծառայություններից և առողջապահությունից, որոնք այլապես անվճար չէին լինի:

Այս բրոշյուրը կազմվել է Կանայք ընդդեմ բռնության եվրոպական ցանցի (WAVE) կողմից, որպես Եվրոպայի խորհրդի գործիքակազմի մաս՝ Ստամբուլի կոնվենցիայի արժեքները, նպատակները և հիմնական դրույթները ամրապնդելու նպատակով հաղորդակցման/իրազեկման միջոցառումների կազմակերպման համար: Հրապարակված նյութի բովանդակության համար պատասխանատու են բացառապես դրա հեղինակները և այն որևէ կերպ չի կարող դիտարկվել որպես Եվրոպայի խորհրդի կամ ՄԱԿ-Կանայք կառույցի պաշտոնական տեսակետերի արտացոլում: Հրապարակված նյութը մշակվել է Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցության և ՄԱԿ-Կանայք կառույցի հետ համագործակցության արդյունքում:

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքային առաջատար իրավապաշտպան կազմակերպություն է: Այն ընդգրկում է 46 մասնակից պետություններ՝ ներառյալ Եվրամիության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որի նպատակն է մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությունը:
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է կոնվենցիայի կիրարկումը մասնակից պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE